600.0298.04.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2017 թվականի №298Ա
քաղ. Երևան

«ԳՐԻԳ-ՆԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի №701Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի հունիսի 6-ի №03/11.1/9841-17 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացվել է «ԳՐԻԳ-ՆԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) պատկանող բազային ռադիոկայանի տեղափոխման վերաբերյալ,

բ) Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմաններով նախատեսված բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 9-ի №ԱԲ-1545Հ գրությամբ,

գ) ընկերությունը 2017 թվականի հունիսի 22-ին դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ դադարեցրել է առանց թույլտվության տեղափոխած բազային ռադիոկայանի աշխատանքը՝ միաժամանակ խնդրելով փոփոխություն կատարել ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0501 թույլտվության պայմանների մեջ,

դ) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերության կողմից ըստ էության վերացվել է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանների խախտումը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել ընկերության նկատմամբ ռադիոհաճախականության օգտագործման №0501 թույլտվության պայմանների խախտման համար 2017 թվականի հունիսի 9-ին հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի «ԳՐԻԳ-ՆԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №701Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №0501 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Աբելյան 6/7.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ 44E 28՝ 36՝՝, 40N 11՝ 55՝՝.».

   «10) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 10 մետր.»:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
------- 2017թ.